

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVIII ԴԱՐԻ 80—90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1. ՅԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԲԱՆԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻ ՀՆՏ

Քյուչուկ-Կայնարչիի հաշտության պայմանագիրը, որ կնքվեց Ռուսաստանի և Թուրքիայի միջև 1774 թ., զգալիորեն ամրապնդեց Ռուսաստանի դիրքերը Սև ծովի շրջաններում: Ռուսաստանին անցան Ադովը, Ենիկալեն, Կերչն ու Կինբուրնը: Թուրքիան ընդունեց Ղրիմի անկախությունը և բարեբեր այդ թերակղզու միակցումը Ռուսաստանին դարձավ օրակարգի հարց: Ռուսական կառավարության առջև խնդիր էր ծառացել գերիշխանություն ձեռք բերել նաև Կասպից ծովի շրջաններում և հնդկական առևտուրը Խրանի ու Կասպից ծովի վրայով շուռ տալ դեպի Ռուսաստան: Այս նպատակով XVIII դարի 80-ական թվականների սկզբին Ռուսաստանում եռանդուն կերպով պատրաստվում էին նպարսկական արշավանքին: Որոշված էր գրավել Անդրկովկասը և այնտեղ ստեղծել Ռուսաստանից կախման մեջ գտնվող վրացական և հայկական պետություններ, որոնք ամուր հենակետ էին հանդիսանալու Ռուսաստանի համար Թուրքիայի դեմ մղվելիք պատերազմների ժամանակ, ինչպես նաև մեծացնելու էին Ռուսաստանի ազդեցությունը Հյուսիսային Կովկասում:

Ռուսական իշխանության հաստատումը Արևելյան Հայաստանի վրա առաջադիմական կարևոր իրադարձություն կլիներ նրա բնակիչների կյանքում: Պարսից հետամնաց, բարբարոս իշխանությանը հաջորդելու էր քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի անհամեմատ առավել բարձր զարգացում ունեցող երկրի տիրապետությունը: Այդ բանը ոչ միայն կփրկեր նրանց կորստից, այլև հնարավորություն կստեղծեր զարգանալու և առաջադիմելու: Ռուսական իշխանությունների նվաճողական ծրագրերը համընկնում էին օտար լծից հայերի ազատագրման բուռն ձգտումներին և այդ պատճառով նրանք ուրախությամբ ու մեծ հույսերով էին սպասում ռուսական արշավանքին:

Խրանի դեմ նոր արշավանքի նախապատրաստման գործը հանձնարարվեց ռուս հռչակավոր զորավար Ա. Վ. Սուվորովին: Նախքան Աստրախան մեկնելը և արշավախմբային զորամասերի հրամանատարությունն ստանձնելը, Սուվորովը սկսում է տեղեկություններ հավաքել Անդրկովկասի վերաբերյալ: 1780 թվականի հունվարին իշխան Գ. Ա. Պոտյոմկինը, Ի. Պ. Գորիշը և Ա. Վ. Սուվորովը Պետերբուրգում հանդիպումներ են ունենում Հովսեփ արքեպիսկոպոս

Արղությանի և Հովհաննես Լազարյանի հետ: Հ. Արղությանն իր օրագրում հետաքրքրական հիշատակագրություններ է թողել այդ հանդիպումների և բանակցությունների մասին՝ նա պատմում է, որ Ի. Պ. Գորիշը նախապես սեղյակ է պահում իրենց՝ պատրաստվող արշավանքի մասին, ապա հարց ու փորձ անում Իրանի վիճակի, քաղաքների հեռավորության, հայերի և թուրքերի զինվորական ուժերի մասին: Սուվորովին հետաքրքրել են էջմիածինը և Ղարաբաղի մելիքները, Վրաստանն ու Հերսիկ II թագավորը: Մասնավորապես նա հետաքրքրվել է հայ աղատագրական շարժումներով: Սուվորովը հուսադրում է Հ. Արղությանին և Հ. Լազարյանին, թե վերականգնվելու է հայկական պետականությունը. «Յուսահորություն արար յոյժ որպէս թէ նորոգելոց իցեն ի մեզ իշխանութիւն ինչ»: Հայ գործիչները հայերեն մի քարտեզի վրա Գ. Պոսյոմկինին ցույց են տալիս Հայաստանի սահմանները և խնդրում «նորոգել ի մեզ զմասնաւոր տէրութիւն ի Մեծն Հայաստան ի քաղաքն Երևան»¹:

Իշխան Գ. Պոսյոմկինը նրանց պատասխանում է, թե դա հնարավոր է, բայց անհրաժեշտ է, որ հայոց կաթողիկոսը տեղական մի քանի հայ իշխանավորների հետ միասին հայերին փրկելու խնդրանքով դիմի իրենց: Այդ դեպքում ռուսները օգնության կգան: Հ. Արղությանն ու Հ. Լազարյանը պատասխանում են իրենց տված բոլոր հարցերին և հեռանում մեծ հույսերով: Հետաքրքրական է, որ Գ. Պոսյոմկինի կարգադրությամբ Հ. Լազարյանը նամակ է գրում Նոր Զուղա՝ Հովսեփ էմինին և նրան հրավիրում Ռուսաստան: Ինչպես երևում է ռուսները չէին մոռացել հայրենի երկրի աղատագրությամբ տոշովող էմինին և կարծում էին, որ նա իրենց շատ օգտակար կլինի Անդրկովկասում ծավալվելիք ռազմական գործողությունների ժամանակ:

1780 թ. հունվարի 10-ին Հ. Լազարյանը զեկուցագիր է ներկայացնում Ա. Սուվորովին, որով հայտնում է, թե Հայաստանի աղատագրումը հեշտությամբ կարելի է իրականացնել, եթե հայերից մեկը ղեկավարի այդ գործը: Վերջինս հաստատվելու էր Դերբենդում, նրան օժանդակություն էր ցույց տրվելու՝ Շամախին ու Գանձակը գրավելիս, ապա Ղարաբաղից և Սղնախից շատ հայեր կմիանան նրան: Բավարար չափով զորք հավաքելուց հետո նա հեշտությամբ գրավելու էր Երևանը և մյուս քաղաքները: Դրա համար Լազարյանը անհրաժեշտ է գտնում, որ ռուսները սկզբից ևեթ զինվորական ու սնունդական օգնություն ցույց տան այդ հայ ղեկավարին: Աստիճաբար Հայաստանը, որ կստեղծվի Պարսկական Հայաստանի տերիտորիայի վրա և հեռզհետե կմեծանա ի հաշիվ Թուրքահայաստանի, կմտնի ռուսական գերիշխանության տակ և ի վիճակի կլինի սեփական միջոցներով պահելու 15.000—20.000 զորք, իսկ պատերազմի դեպքում՝ 60.000: Անհրաժեշտության դեպքում, նշված է այդ զեկուցագրում, այդ զորքը կարելի է ուղղել Թուրքիայի կամ այլ թշնամու դեմ²:

Այս զեկուցագիրը Ա. Սուվորովը ներկայացնում է Եկատերինա II կայսրուհուն³:

¹ «Յովսէփ կաթողիկոսի յիշատակարանը», «Կոռնկ Հայոց աշխարհին», 1863, № 7, էջ 511:

² «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа», т. II, М., 1838, էջ 69—70:

³ Տե՛ս А. Р. Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, էջ 23—24:

⁴ Տե՛ս М. Нерсисян, Из истории русско-армянских отношений, книга первая, Ереван, էջ 55:

1780 թ. հունվարի վերջերին Սուվորովը մեկնում է Աստրախան և մեծ եռանդով ձեռնամուխ լինում արշավանքի նախապատրաստմանը: Իր գործակալների միջոցով նա տեղեկություններ է հավաքում Իրանի և Անդրկովկասի խանությունների վերաբերյալ, կապեր հաստատում Ղարաբաղի մելիքների հետ:

Սուվորովին հրահանգված էր պատրաստություններ տեսնել Դերբենդի վրայով շարժվելու դեպի Գիլան և Դերբենդի, Բաքվի ու Գիլանի խաներին ենթարկելու Ռուսաստանին: Միաժամանակ Գիլան էր շարժվելու նաև ռուսական նավատորմը: Այդ արշավանքը ուժեղացնելու էր Ռուսաստանի ազդեցությունը Անդրկովկասում և մերձկասպյան շրջաններում, ապահովելու էր ռուսների առևտուրը Կասպից ծովով: Պաշտոնապես առաջմ յայսպիսի խնդիրներ էին դրվում Սուվորովի առջև, սակայն հաջողության դեպքում չէր բացառվում տերիտորիալ նվաճումների կատարելու հարցը: Այդ է պատճառը, որ Սուվորովի մոտ պատրաստ էին դեպի Ռեշտ, Ղարաբաղի վրայով Երևան և դեպի Սպահան ու Պարսից ծոց տանող ուղիների մանրամասն նկարագրությունները⁵:

Անցնում էին ամիսներ, սակայն ռուսական արշավանքը չէր սկսվում: Գնալով ծանրանում էր Ղարաբաղի հայերի վիճակը: Փանահին փոխարինած Իբրահիմ խանը ավելի էր սաստկացնում ճնշումները հայերի նկատմամբ: 1781 թվականի փետրվարի 24-ին նա իր մոտ է կանչում Դիզակի Մելիք-Նսայուն և դավադրաբար սպանել տալիս: Զրաբերդի Մելիք-Աղամը, Գյուլիստանի Մելիք-Բեգլարը, Մելիք-Հովսեփի որդին և վեց այլ անձինք, մեծ մասամբ քոյսվաններ, 1781 թվականի սեպտեմբերի 2-ին օգնության խնդրանքով նամակներ են ուղարկում ռուսական իշխանություններին:

Եկատերինա II կայսրուհուն հասցեագրած նամակում նրանք պատմում են Ղարաբաղում մահմեդական տիրապետություն հաստատվելու մասին, նկարագրում իրենց ծանր վիճակը և հայտնում, թե ռուսական զորքերի օգնությամբ փրկվե՞նք ձեր թագավորից: Իշխան Գ. Պոտյոմկինին նրանք խնդրում են Սուվորովի գլխավորությամբ 10.000 ռուս հետևակայիններ ուղարկել Ղարաբաղ և հայտնում, որ իրենք պատրաստ են ապստամբելու:

Այս խնդրագրերը մնացին անպատասխան, իսկ դեպի Իրան ծրագրված արշավանքը հետաձգվեց: Ռուսական հրամանատարությունը բավարարվեց կապիտան Վոյնովիչի գլխավորությամբ ծովային մի փոքրիկ արշավախումբ ուղարկելով դեպի հարավ, իսկ Սուվորովը 1781 թվականի դեկտեմբերի վերջերին Կազան մեկնելու հրաման ստացավ⁶:

1782 թվականի աշնանը ռուսական կառավարությունը որոշում կայացրեց շարունակելու արշավանքի պատրաստությունները: Քարիմ խանի մահից հետո Պարսկաստանում ծայր առած ներքին կռիվները թուլացրել էին պարսիկներին, ռուսի և հարմար առիթ էր ստեղծվել Անդրկովկասում եռանդուն գործողություններ ծավալելու: Արշավանքը նախատեսվում էր սկսել 1783 թ. գարնանը. պատրաստությունները շարունակվում են իշխան Գ. Պոտյոմկինի ազգական, գեներալ Պ. Ս. Պոտյոմկինի ղեկավարությամբ:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 27—28:

⁶ ЦГВИА, ф. 52, оп. 1/194, св. 124, дело № 8, էջ 5—6:

⁷ А. Р. Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х г. XVIII столетия, էջ 23—25:

Նախատեսվում էր նվաճել դեռևս Պետրոս Առաջինի կողմից զբաղված և հետագայում պարսիկներին թողնված մերձկասպյան շրջանները, դերիշխանությունն հաստատել Վրաստանի վրա և ուսական հովանավորության ներքո ստեղծել հայկական պետություն: Գ. Ա. Պոտյոմկինը 1782 թ. սեպտեմբերի 2-ին գեներալ Պ. Ս. Պոտյոմկինին տված հրամանագրում արշավանքի ընդհանուր ծրագրից առանձնացնում է այն մասը, որը վերաբերում էր Արևելյան Վրաստանին և հայկական թագավորության վերականգնմանը: «Ձեզ ուղարկված հրահանգներից,—գրում էր Գ. Ա. Պոտյոմկինը,—Դուք կիմանաք, թե որքան սերտ կապ պետք է հաստատել Հերակլի հետ: Շահելով նրա վստահությունը, անպայման Դուք պետք է նրան կառավարեք: Շուշիի Իբրահիմ խանին պետք է տապալել, որովհետև դրանից հետո Ղարաբաղը պետք է կազմի հայկական անկախ, միայն Ռուսաստանին ենթակա մարզ⁸»:

Եթե թուրքերը եվրոպական մայր ցամաքում ռազմական գործողություններ սկսեին Ռուսաստանի դեմ, ապա ուսական հրամանատարությունը՝ վրացական և հայկական ուժերի օգնությամբ, Վրաստանի վրայով հարձակվելու էր Թուրքիայի վրա⁹:

1782 թ. նոյեմբերի 4-ին գեներալ Պ. Ս. Պոտյոմկինը ժամանում է Հյուսիսային Կովկասի Գեորգիևսկ ամրոցը, որտեղից նամակագրական կապ է հաստատում Հերակլ II-ի, Ղարաբաղի մելիքների, Սիմեոն Երևանցուն հաջորդած Ղուկաս կաթողիկոս Կարենցու և ադրբեջանական խաների հետ: Նա Անդրկովկասից տեղեկություններ է ստանում ճանապարհների, տնտեսության վիճակի, զինված ուժերի, քաղաքների մասին: Այդ գործում նրան մեծ աջակցություն է ցույց տալիս Հ. Արղուսյանը, որը նույնպես ժամանել էր Գեորգիևսկ:

1783 թ. սկզբներին Դերենդի Ֆաթալի խանը կրկին հարձակվում է Ղարաբաղի վրա: Այդ արշավանքը ավելի աղետաբեր կլիներ Ղարաբաղի համար, եթե օգնություն չլուծակերպեր Հերակլ II թագավորը: Լեռնականները հեռանում են Ղարաբաղից մեծ ավարով: Ռուսական իշխանություններին ուղղված իրենց նամակներում Ղարաբաղի մելիքները նկարագրելով այդ արշավանքի պատճառած աղետները, խոսում են նաև այն հերոսական դիմադրության մասին, որ ցույց են տվել հայերը Ֆաթալիի հրոսակներին:

Լուր ստանալով ռուսական արշավանքի նախապատրաստության մասին, Ջրաբերդի և Գյուլիստանի մելիքները, Գանձասարի Հովհաննես կաթողիկոսը և այլ նշանավոր անձինք 1783 թ. մարտին նամակներ են հղում գեներալ Պ. Ս. Պոտյոմկինին և Հ. Արղուսյանին ու խնդրում փութացնել ազատարար արշավանքը. նրանք հայտնում են, որ Ղարաբաղը ի վիճակի է սննդով ապահովելու ռուսական զորքերին:

Ռուսական արշավանքի պատրաստությունները աշխուժացնում են ազատագրական շարժումը նաև Երևան քաղաքում: Երևանի բնակիչները, որոնք գտնվում էին օտար հարստահարողների մշտական ճնշման ու շահագործման ներքո և շարունակ ենթարկվում էին պատերազմների ու ներքին կռիվների արհավիրքներին, երազում էին ռուսական զորքերի օգնությամբ ազատվել այդ

⁸ О. П. Маркова, Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, էջ 161:

⁹ Տե՛ս նույն աեղում, էջ 160:

ամենից, ուստի և ուշիատուում էին հնարավոր միջոցներով նպաստել արշավան-
րի նախապատրաստմանը: Ամենից առաջ նրանք ուսաց հրամանատարու-
թյանը ռազմական ու այլ բնույթի տեղեկություններ էին հաղորդում: այդ
բանում առավել ջանք էր թափում Երևանում ծավալված ազատագրական
շարժման նշանավոր դեմքերից Ստեփան Տեր-Սահակյանը: Նա ծագումով հա-
յուստ և նշանավոր ընտանիքից էր, ամբողջովին նվիրված հայոց երկրի
ազատագրման գործին: 1783 թ. աշնանը Տեր-Սահակյանը մեկնում է Ղարա-
բաղ, ծանոթանում մելիքների ռազմական կարողություններին և դեկտեմբերի
22-ին գեներալ Պ. Պոտյոմկինին հայտնում, որ Ղարաբաղի հինգ մելիքներն
ունեն 5.000 հոգուց բաղկացած զորք, կարող են ստեղծել պարենի անհրաժեշտ
պաշար և պատրաստ են դիմավորելու ռուսներին Գանձակի մոտակայքում¹⁰:

Ս. Տեր-Սահակյանի Ղարաբաղ կատարած այցելությունը ուշագրավ
իրողություն է: Հայտնի է, որ հայ ազատագրական շարժման այդ կենտրոն-
ները՝ Ղարաբաղն ու Երևանը գործում էին անջատ-անջատ և դա էլ ազատա-
գրական շարժման թուլության պատճառներից մեկն էր: Ղարաբաղում Ս. Տեր-
Սահակյանը, ամենայն հավանականությամբ, երևանցիներին հուզող հարցերի
շուրջը մտքերի փոխանակություն է ունեցել մելիքների հետ և փորձ է կատա-
րել ընդհանուր նպատակի համար համաձայնեցնել իրենց գործողությունները:

1782 թ. վերջերին Պ. Պոտյոմկինը ռուսական մի գործակալի՝ ղոկտոր Յա-
կով Ռայնբախի հետ թանկարժեք նվեր և նամակ է ուղարկում Ղուկաս կաթողի-
կոսին: Վերջինս տեղյակ էր ռուսական ծրագրերին և ռուսահայերին ու ռուսա-
կան պետական գործիչներին գրած նամակներում ցանկություն էր հայտնել, որ
ռուսական տիրապետությունը տարածվի հայերի վրա: Նա մեծ հարգանքով
է ընդունում Ռայնբախին: Էջմիածնում գումարվում է խորհրդակցություն, որի
մասնակիցները միահամուռ որոշում են Հայաստանի ազատագրման համար
վիճվորական օգնություն խնդրել ռուսներից: Ահա թե ինչ է գրել այդ խոր-
հրդակցության մասին իշխան Գ. Պոտյոմկինը Նևստրեյսկա II թագուհուն:

«Այդ օրը արդեն կես գիշերից անցել էր, երբ խորհրդակցություն գումար-
վեց, որի ժամանակ բոլորը երդվեցին նախկինից առավել հավատարիմ լինել
ռուսական կայսերական գահին և խնդրել ողորմած հովանավորություն և բա-
րեհաճություն Հայաստանին՝ ուղարկելով որոշ քանակությամբ զորք, որը
չխառնվելով ոչ մի գործի, սոսկ իր ներկայությամբ կարող է բազմապատկել
հայ ժողովրդի քաջությունը: Բոլոր մելիքները պատրաստ են թողնել մեր
զորքերը իրենց ամրացված վայրերը, կերակրել նրանց և անել բոլոր անհրա-
ժեշտ մատակարարումները»¹¹:

1784 թ. ամռանը Հայաստանն ազատագրելու խնդրի շուրջ ռուսների հետ
բանակցելու համար երևանցի հայերը Պետերբուրգ են ուղարկում Ս. Տեր-
Սահակյանին: Հասնելով Պետերբուրգ, Տեր-Սահակյանը կամ ինչպես անվա-
նում էին նրան՝ «Արարատյան դեսպանը», ստանում է Հ. Արղունյանի ուղար-
կած հայ-ռուսական պայմանագրի նախագիծը, որպեսզի նրանով դիմի ռու-
սական իշխանություններին¹²: Արղունյանը գրում է Տեր-Սահակյանին, որ նա
ոչ միայն որպես Երևանի դեսպան է ներկայանալու ռուսական կառավարու-

¹⁰ Տե՛ս ЦГАДА, ф. Гос. архив, р. XXIII, д. №13, ч. VII, էջ 169:

¹¹ А. Р. Иосифиян, Россия и армянское освободит. движение..., էջ 55:

¹² Տե՛ս նույն տեղում, էջ 121:

թյանը, այլև որպես ողջ հայության ներկայացուցիչ. «Դու դեֆութաթ, այսինքն դեսպան և կամ միջնորդ ևս յերևանու, այլև բոլոր աղգին հայոց և ողորմելի մեկիքացն Ղարաբաղու, որք մինչև ցայսօր լցին սղաղակաւ յականջս զոցս և մեր... ահա հասել է ժամ՝ կամ փառաւորեսցի աղղ մեր, կամ կանդնեսցի ըստ ծերունւոյն, և կամ անկեալ զլորեսցի»¹³:

«Արարատյան դեսպանը» իր հետ Ռուսաստան էր տարել Երևանի հայերի նամակները՝ հասցեագրված Եկատերինա II թագուհուն և իշխան Գ. Պոտյոմկինին, որոնցով նրանք խնդրում էին օգնություն ցույց տալ իրենց՝ ազատվելու պարսից լծից: Բայց այդ օգնությունը ուշանում էր, որովհետև ռուսական հրամանատարությունը կրկին հետաձգել էր պարսկական արշավանքը և հույս ունեւր մերձկասպյան շրջանների զգալի մասին և Արևելյան Անդրկովկասին տիրանալ խաղաղ բանակցությունների միջոցով:

2. ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԴԱՇՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԸ

Պարսկական արշավանքի նախապատրաստությունների ժամանակ, երբ օրակարգի մեջ էր նաև Հայաստանի ազատագրման և հայկական պետականության վերականգնման հարցը, հայ գործիչների կողմից մշակվում և ռուսական արքունիքին են ներկայացվում ապագա հայկական պետության և Ռուսական կայսրության միջև կնքվելիք դաշնագրերի երկու նախագծեր, որոնցից մեկի հեղինակը ռուսահայոց հոգևոր առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանն էր, մյուսինը՝ հնդկահայ հայրենասեր Շահամիր Շահամիրյանը:

Հ. Արղությանը, որը 18 կեսից բաղկացած դաշնագրի իր նախագիծը ռուսական իշխանություններին ներկայացրեց 1783 թ., առաջարկում էր վերականգնել հայկական թագավորությունը և հայոց թագավորի ընտրության իրավունքը վերապահել ռուսական կայսրուհուն, որը կարող էր թագավոր ընտրել հայերից կամ ռուսներից: Այլ առիթներով արված ակնարկներից կարելի է ենթադրել, որ երկրորդ դեպքում Հ. Արղությանը և նրա համախոհները նկատի ունեին իշխան Գ. Ա. Պոտյոմկինին, որին այս ձևով կամենում էին շահագրգռել Հայաստանի ազատագրման գործը զուլի բերելու համար: Հատուկ կետով սահմանվում էր. «Որ ոք թագաւոր կացուցի, լինիցի հայոց օրինօք և ի Վաղարշապատ թագաւորական քաղաքն, ի սուրբ էջմիածին օժանիցի, որպէս նախնի թագաւորքն մերս»:

Ըստ այդ նախագծի Ռուսական կայսրությունն ու Հայոց թագավորությունը միմյանց հետ կապված էին լինելու բարեկամության հավիտենական դաշինքով: Հայկական պետությունը պաշտպանելու, Թուրքիային և Իրանին զրապելու համար Հայաստանում մշտապես պահվելու էր ռուսական զորք՝ գնեհրալի հրամանատարության տակ: Հայոց թագավորի ժառանգներից մեկը գտնվելու էր ռուսական կայսեր արքունիքում:

Ռուսաստանից հայկական պետության վասալական կախման հարցին Հ. Արղությանը հատկացրել էր հատուկ կետ. «Հպատակութիւն մեր այնպէս եղիցի,—գրում է նա,—որպէս լինիւր երբեմն Յունաց և Պարսից տալով ի յարքունիս հարկացն և ի հանքաց ոսկւոյ և արծաթոյ. և ի ժամանակի պատերազմի յօգնութիւն միմեանց հասանեն, որքան և հարկն պահանջեսցէ»:

¹³ Մատենադարան, ձեռագիր № 4496, էջ 238: